ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

"23" 08 2021թ. N 837-Լ

ք. Երևան

«ԼԱԶԵՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 224-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 3-րդ, 12-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի ապրիլի 7-ի N 312-Լ հրամանի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Լազերային տեխնիկա» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի ընտրության համար հայտարարել բաց մրցույթ:
2. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ ապահովել.
   1) «Լազերային տեխնիկա» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրենի մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակումը՝ զանգվածային լրատվության միջոցներով, Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պաշտոնական կայքէջում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ www.azdarar.am:
   2) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2021 թվականի ապրիլի 7-ի «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համակարգի

պետական ոչ առևտրային կազմակերպությունների և այն փակ բաժնետիրական ընկերությունների, որոնց հարյուր տոկոս բաժնեմասի կառավարման լիազորությունը վերապահված է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը, գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի անցկացման և մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 312-Լ հրամանից բխող անհրաժեշտ միջոցառումները:

8/23/2021

X

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Signed by KHACHATURYAN VAHAGN 3204590542

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ